

կենսագրութիւնը զոր Հ. Ղեւոնդ Յովնանեան 1852ին լոյս ընծայած է Վիեննայի մէջ Ռուսականայ կեանքի և առհասարակ Պուրէշը քաղաքին մէջ մեծ դեր կատարող անձի մը, Միլոզայեան Մանուկ պէյի մասին:

Մխիթարեանց փառքերէն մէկը, Հ. Ղեւոնդ Ալիշան, որ իր քերթողի զգայուն սրտին կը միացնէր նաեւ ծովածաւալ հմտութիւն մը, իր բազմաթիւ պատմական և տեղագրական երկերուն կարգին լոյս ընծայեց 1896ին Վենետիկի մէջ «Կամենից» Տարեգիրք հայոց Լեհաստանի և Ռուսիոյ: Այս օրագրութիւնները՝ որոնք գրի առնուած են 1430-1652 տարիներու ընթացքին կամենիցի հայ քրոնիկագիրներուն կողմէ, մեծ լոյս կը սփռեն նաեւ ուսմէն երկիրներու ժամանակակից դէպքերուն վրայ, և մեր կողմէ վերջերս մատչելի դարձուեցան ուսմէն հասարակութեան:

Վիեննայի Մխիթարեանց հանգուցեալ արբահայրը, Հ. Գրիգոր Գովրիկ, բնիկ Կեռլացի, Արտէալի հայութեան անցեալին մասին լոյս ընծայեց Վիեննայի մէջ 4 հատորներ, առաջինը 1896ին Կեռլայի մասին, — «Դրանսիոյսանիոյ հայոց Մետրապոլիսը», — իսկ միւս երեքը «Հայք յԵղիսաքերոսպոլիս Դրանսիոյսանիոյ» (1893, 1899, 1904), չորս խղճամիտ աշխատանքներ ուր չեն պակսիր նօթեր նաեւ ուսմէն կեանքը շահագրգռող նիւթերու շուրջ:

1. Marturii armenesti despre Romani. Cronica din Camenita, cu o prefata de H. Dj. Siruni. Academia Romana Memoriule sectiuni istorice. 1931.

Յիշենք այս շարքին մէջ Ռուսմանիոյ հանգուցեալ բանաստեղծ թագուհին Քարմէն Սիլվայի քերթուածներուն թարգմանութիւնը, լոյս տեսած 1897ին Վենետիկի մէջ, շքեղ տպագրութեամբ մը, և կատարուած միաբանութեան ամէնէն բեղմնաւոր անդամներէն մէկուն՝ Հ. Սրսէն Ղազիկեանի կողմէ, («Հատըտիթ քերթուածք» Քարմէն Սիլվայի, Վենետիկ, 1897, էջ իա + 318):

Ասոնցմէ զատ երկու Մխիթարեանց գիտական օսկանները, «Բագմալիկ»ը 1843էն և «Հանդէս Ամսօրեայ»ն 1887էն ի վեր, իրենց հաւաքածոներուն մէջ բազմաթիւ նիւթեր ունին՝ որոնք կը լուսարանեն հայ անցեալը ուսմէն երկիրներու մէջ:

Չաւեցնենք ճիշտ այստեղ որ Ռուսմանիոյ հայ գաղութը երբեմն ողողուած է եղբի Մխիթարեանց հրատարակութիւններով: Մոլտովան ու Թրանսիլվանիան շտեմարան մըն են դեռ մինչեւ այսօր Վենետիկեան տպագրութեանց: Երբ 1927ին հիմը կը դնէինք ուսմանահայ Կեղը. Մատենադարանին՝ մեր անդրանիկ ատաղձը կազմեցին այդ հրատարակութիւնները, որոնք կը քննադատին շատ մը տասնեակ տարիներէ ի վեր եկեղեցիներու վերնատունը, փոշիներու տակ...:

Ը:

Ահա թէ ինչո՞ւ Ռուսմանահայութիւնը եւս սրտանց կ'ողջունէ կրթական բեղմնաւոր յարկի մը այս դարադարձը, ու յանձին անոր լոյսի այն մեծ օճախը՝ որ եղաւ ու կը շարունակէ ըլլալ Մխիթարայ Տունը:

ԿԱՐՊԱԹԵԱՆ ԴԵՏ

ՀԱՐԻԻՐԱՄԵԱՆ ՄԸ

ՍՈՒՐԱՏ - ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԴԱՐԱԴԱՐՁ

1836 - 1936

Ազգերու պատմութեան մէջ, գոյութեան ամենէն ճակատագրական մէկ պահուն, դարերը կը ծնին գերմարդեր, հանճարներ... Նափուէտն Պոնափարդ, Մեծն Աղեքսանդր, Յուլիոս Կեսար, Շէքսպիրներ, Կէօթէներ, Տանդէներ իրենց պատկանած ազգերուն, իրենց ապրած դարերուն ճակատագիրն յեղաշրջելէն զատ՝ անոնց նկատագրին ոյժը և գերմարդկային երկունքն ու դերն է որ կը խորհրդանշեն իսպառու Հայ իրականութեան մէջ, երբ Լուկուլլոսներու, Յագկերտներու, Բուդանբու դէմ՝ կուրծք տուող մերթ յաղթանակի սուր շարժող պողպատակուն Տիրանները, վարդանները, Ռուբէնները կ'անհետին աշխարհի խարխուլ բեմէն, երբ սերունդներն անոնց կ'ըլլան թափառական՝ գաղթելով փոքր Ասիայէն՝ Միջագետք, Լեհաստան, Հնդկաստան և այլուր, ամէնուրեք ենթակայ անուր շարժարանքի, տառապանքի, հալածանքի, հայ ցեղը վսեմ իր հինգ դարերու լուսնէն, համբերանքէն և խոկումէն վերջ կը ծնի, կը զոհաբերէ՝ գերմարդ մը, կը ստեղծագործէ՝ աստուած մը՝ Մխիթար... հայ Մեսրոպին տուած մը՝ հաւատքը, հայ կամքը, հայ Նարեկացիին հաւատքը, հայ վերածնունդի խիղճն ու ոգին փոխանցելու, կտակելու և ներշնչելու համար բոլոր դարերու բոլոր հայերուն:

Եթէ Ան՝ կը հիմնէ փարոսն իր ցեղին, աշխարհի մայր քաղաքակրթութեան, գիտութեանց և գեղարուեստից փառապանծ ոստանին մօտ, այն յատկանշական գիտակցութեամբ՝ որ իրմէ վերջ, դարերու բարբարոս հուլովումին հանդէպ, լոյսի, արդարեւ պատմութեան մէջ, գոյութեան ամենէն ճակատագրական մէկ պահուն, դարերը կը ծնին գերմարդեր, հանճարներ... Նափուէտն Պոնափարդ, Մեծն Աղեքսանդր, Յուլիոս Կեսար, Շէքսպիրներ, Կէօթէներ, Տանդէներ իրենց պատկանած ազգերուն, իրենց ապրած դարերուն ճակատագիրն յեղաշրջելէն զատ՝ անոնց նկատագրին ոյժը և գերմարդկային երկունքն ու դերն է որ կը խորհրդանշեն իսպառու Հայ իրականութեան մէջ, երբ Լուկուլլոսներու, Յագկերտներու, Բուդանբու դէմ՝ կուրծք տուող մերթ յաղթանակի սուր շարժող պողպատակուն Տիրանները, վարդանները, Ռուբէնները կ'անհետին աշխարհի խարխուլ բեմէն, երբ սերունդներն անոնց կ'ըլլան թափառական՝ գաղթելով փոքր Ասիայէն՝ Միջագետք, Լեհաստան, Հնդկաստան և այլուր, ամէնուրեք ենթակայ անուր շարժարանքի, տառապանքի, հալածանքի, հայ ցեղը վսեմ իր հինգ դարերու լուսնէն, համբերանքէն և խոկումէն վերջ կը ծնի, կը զոհաբերէ՝ գերմարդ մը, կը ստեղծագործէ՝ աստուած մը՝ Մխիթար... հայ Մեսրոպին տուած մը՝ հաւատքը, հայ կամքը, հայ Նարեկացիին հաւատքը, հայ վերածնունդի խիղճն ու ոգին փոխանցելու, կտակելու և ներշնչելու համար բոլոր դարերու բոլոր հայերուն:

Եթէ Ան՝ կը հիմնէ փարոսն իր ցեղին, աշխարհի մայր քաղաքակրթութեան, գիտութեանց և գեղարուեստից փառապանծ ոստանին մօտ, այն յատկանշական գիտակցութեամբ՝ որ իրմէ վերջ, դարերու բարբարոս հուլովումին հանդէպ, լոյսի, արդարեւ պատմութեան մէջ, գոյութեան ամենէն ճակատագրական մէկ պահուն, դարերը կը ծնին գերմարդեր, հանճարներ... Նափուէտն Պոնափարդ, Մեծն Աղեքսանդր, Յուլիոս Կեսար, Շէքսպիրներ, Կէօթէներ, Տանդէներ իրենց պատկանած ազգերուն, իրենց ապրած դարերուն ճակատագիրն յեղաշրջելէն զատ՝ անոնց նկատագրին ոյժը և գերմարդկային երկունքն ու դերն է որ կը խորհրդանշեն իսպառու Հայ իրականութեան մէջ, երբ Լուկուլլոսներու, Յագկերտներու, Բուդանբու դէմ՝ կուրծք տուող մերթ յաղթանակի սուր շարժող պողպատակուն Տիրանները, վարդանները, Ռուբէնները կ'անհետին աշխարհի խարխուլ բեմէն, երբ սերունդներն անոնց կ'ըլլան թափառական՝ գաղթելով փոքր Ասիայէն՝ Միջագետք, Լեհաստան, Հնդկաստան և այլուր, ամէնուրեք ենթակայ անուր շարժարանքի, տառապանքի, հալածանքի, հայ ցեղը վսեմ իր հինգ դարերու լուսնէն, համբերանքէն և խոկումէն վերջ կը ծնի, կը զոհաբերէ՝ գերմարդ մը, կը ստեղծագործէ՝ աստուած մը՝ Մխիթար... հայ Մեսրոպին տուած մը՝ հաւատքը, հայ կամքը, հայ Նարեկացիին հաւատքը, հայ վերածնունդի խիղճն ու ոգին փոխանցելու, կտակելու և ներշնչելու համար բոլոր դարերու բոլոր հայերուն:

Եթէ Ան՝ կը հիմնէ փարոսն իր ցեղին, աշխարհի մայր քաղաքակրթութեան, գիտութեանց և գեղարուեստից փառապանծ ոստանին մօտ, այն յատկանշական գիտակցութեամբ՝ որ իրմէ վերջ, դարերու բարբարոս հուլովումին հանդէպ, լոյսի, արդարեւ պատմութեան մէջ, գոյութեան ամենէն ճակատագրական մէկ պահուն, դարերը կը ծնին գերմարդեր, հանճարներ... Նափուէտն Պոնափարդ, Մեծն Աղեքսանդր, Յուլիոս Կեսար, Շէքսպիրներ, Կէօթէներ, Տանդէներ իրենց պատկանած ազգերուն, իրենց ապրած դարերուն ճակատագիրն յեղաշրջելէն զատ՝ անոնց նկատագրին ոյժը և գերմարդկային երկունքն ու դերն է որ կը խորհրդանշեն իսպառու Հայ իրականութեան մէջ, երբ Լուկուլլոսներու, Յագկերտներու, Բուդանբու դէմ՝ կուրծք տուող մերթ յաղթանակի սուր շարժող պողպատակուն Տիրանները, վարդանները, Ռուբէնները կ'անհետին աշխարհի խարխուլ բեմէն, երբ սերունդներն անոնց կ'ըլլան թափառական՝ գաղթելով փոքր Ասիայէն՝ Միջագետք, Լեհաստան, Հնդկաստան և այլուր, ամէնուրեք ենթակայ անուր շարժարանքի, տառապանքի, հալածանքի, հայ ցեղը վսեմ իր հինգ դարերու լուսնէն, համբերանքէն և խոկումէն վերջ կը ծնի, կը զոհաբերէ՝ գերմարդ մը, կը ստեղծագործէ՝ աստուած մը՝ Մխիթար... հայ Մեսրոպին տուած մը՝ հաւատքը, հայ կամքը, հայ Նարեկացիին հաւատքը, հայ վերածնունդի խիղճն ու ոգին փոխանցելու, կտակելու և ներշնչելու համար բոլոր դարերու բոլոր հայերուն:

ԱՐԱՄԱՎԷՊ 09-008 - 7648. 1936

մտքի և փառքի «Արծիւներն Հոովմէական» կարող են հսկել իր օճախին, տալով անոր շունչն հզօր հին դարերու Օրէնքին, հին դարերու Իրաւունքին, հին դարերու Արդարութեան:

Եթէ Ալիշաններու, Չամչեաններու, Բագրատունիներու փաղանգն ակամայ կը հանդիսանայ յաղթական հանգրուանը ցեղին յառաջադիմութեան, մշակոյթին, հանճարին, — դարերը գիտնան թո՛ղ — որ անոնց բոլորին աղբիւրը կը խտանայ կը բիւրեղանայ մեծ Ռահվիրայի մը կամքի ոյժին մէջ, նպատակին ու մտքին:

Եթէ՛ Պայրըններ, Ժողովներ, Նանսէններ և Ֆրանց Վէրֆէլներն հին, նոր և ասպագայ դարերուն տառապել են, տառապեցան ու պիտի տառապին հայու դժբախտ ճակատագրով. անոնք բոլոր՝ ի տես անմահ Սերաստացիի գործին, բոլոր ցեղերուն մարգարէի հաւատքով պիտի ըսեն, պիտի գոչեն, քարոզեն.

— «Հայը՝ ունի քանի՛ Մխիթար, ունեցած է իր Փիղիասը և կ'ունենայ իր Տուչէն...»:

Անոնք որ հին են, անոնք՝ հզօր են... հզօր՝ մտքով, հզօր՝ կամքով, հզօր՝ բունցքով. զի ցեղերուն կեանքը նման է հրաբուխներու. անոնք մարած են, անոնք մեռած չեն. Եթէ՛ Հոռոմ ունի որպէս խորհրդանիշ իր յաւերժութեան հին Վեսուլը, հայն ալ ունի՛ իր Արագածը...

\* \* \*

Անհատներ կան նուիրական որոնք յանուն իրենց ջամբած գաղափարին դարեր

յաւէտ անմոռաց, դրոշմուած կը մնան բու-  
լոր անխօս շրթներու, բոլոր շէնշող մտքե-  
րու, բոլոր անկեղծ սրտերու մէջ, յար-  
զանքի և երախտագիտութեան ամենէն խո-  
նարհ բնազդին համար՝ զոր երախտա-  
պարտ սերունդները ցեղին, ամէն ատեն,  
ամէն տեղ և խապառ գիտեն յաւերժա-  
ցնել յիշատակն անոնց «բարեբար» մակ-  
դիրով:

Եթէ Մուրատ և Ռափայէլ ակամայ կը  
հանդիսանան անձնուէր ջահակիրներն ու  
իրապաշտ իրագործողներն հայ. Մխիթա-  
րեան վերածնունդին, դարձնելու համար  
նոր ճակատագիրը ցեղին, սատարելով ա-  
նոր աղքատ ու որբ զաւակներու դաստիա-  
րակութեան, եթէ՛ Անոնց հաւատքին լոյսը  
կաթիլ կաթիլ, պուտ առ պուտ հարիւր տարի  
անսպառ, դար մ'է այսօր ծորելով Մկրտ-  
տիչ Պէշիկթաշլեաններու, Թովմաս Թէր-  
զեաններու, Արփիար Արփիարեաններու,  
Դանիէլ Վարուժաններու, Բագրատունի-  
ներու, Փափագեաններու, Էտկար Շահին-  
ներու հոգւոյն մէջ կը փոխանցուի և պիտի  
ալ փոխանցուի այսօր, վաղը, մինչեւ վերջ  
ցեղին բոլոր խաւերուն, փաստօրէն և վրձ-  
նականօրէն կը խորհրդանշէ պատմական  
արշալոյսը ցեղին լուսաւորութեան, անոր  
վաղուան յաղթութեան ու փառքին:

Թո՛ղ այսօր անզուգական անունները  
Մուրատի և Ռափայէլի, այլեւս նուիրա-  
կանացած այս կրթական յարկի առաջին  
հարիւրամեակի առթիւ, անջինջ տառերով  
թո՛ղ քանդակուին աշխարհի պատմութեան  
մէջ «Հայ միացը» պանծացնող կրանիթ  
կոթողին վրայ, որպէս կենդանի ապա-  
ցոյց հայ հոգիի զօրութեան, հայ շուն-  
չին յաւերժութեան:

Եւ որքան ատեն կանգուն մնան ներկայ  
և ապագայ դարերուն մեզ զլացուած հայ-  
րենիքին մէջ, հայրենիքէն դուրս, աշխար-  
հի չորս ծագերուն հայեցի կրթութեան տա-

ճարներ, շնորհիւ գերագոյն զոհողութեան,  
պարտքի խղճամիտ գիտակցութեանն ու  
ճշմարիտ հայրենասիրութեանը Սամուէլ  
Մուրատներու, Եղուարդ Ռափայէլներու,  
Արամեաններու, Սանասարեաններու, Պէր-  
պէրեաններու և բազում այլոց, հայը՝  
կարող է իրականացնել իր ազգային մեծ  
խտէալը, իր ժառանգական անձեռնմխե-  
լի իրաւունքն ապրելու որպէս ստեղծա-  
գործ ժողովուրդ և հուսկ, կատարելագոր-  
ծել իր քաղաքակրթական վսեմ դերը՝  
ցեղերու պատմութեան մէջ, գերականութեան մէջ:

\* \* \*

Դա՛ր մը լոյսի, դա՛ր մը փառքի, դա՛ր մը  
ուսման խորհուրդն է որ պահիկ մը գէթ ի մի  
կը համախմբէ ալեհեր ու գարուն հասակ-  
ները ցեղին, աշխարհի չորս հովերէն հը-  
պարտ ճակտով, ծիծաղ սրտով, խոնարհ հոգ-  
ւով ճշգրիտ հաշուետուութիւն տալու իր  
կոչումին, իր նուիրական նշանաբանին  
կրօնասիրութեան, Հայրենասիրութեան,  
Ուսումնասիրութեան:

Դա՛ր մը լոյսի, դա՛ր մը փառքի, դա՛ր  
մը ուսման խոր ըմբռնումն է որ այսօր ցե-  
ղին ափ մը զաւակներուն կ'ընծայէ պա-  
տեհութիւնը զոհար իր անցեալովն արիա-  
նալ և այլեւս ամէն գնով զոհարեցողիլ յա-  
նուն ցեղին վերելքին...

Ապրէ՛ ստեղծագործ հայ հանճար —  
դուն ես.  
ապրէ՛ Ալիշանեան հայ հոգի — դուն  
կը մնաս  
ապրէ՛ և հիասքանչ Հայ բարբառ —  
դուն կ'ըլլաս՝  
«Եղիցի»ն Մխիթարին, Մուրատին,  
Ռափայէլին...

ՃԵՐԱԳ  
Նախկին սան Մ.-Ռափ. Վրժիթի  
Մարտիկա 1-7-1936

# ՄՈՒՐԱՏ - ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

(Ի ՅՈՒՇ ԻՒՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐԱԴԱՐՁԻՆ)

1836-1936

ՀԱՅ լեզուի, Գրի և մտքի սրբանուէր  
տաճար, ողջոյն քեզ:

Հայ մշակոյթի, գեղարուեստի և դաս-  
տիարակութեան յաւերժական յուշարձան,  
փա՛ռք քեզ:

Հայ ազգային ոգիի, հայրենասիրու-  
թեան և հայագիտութեան մշտավաճ կրա-  
կարան, պատիւ քեզ:

Դո՛ւ անշէջ լոյս և անմար յոյս, դո՛ւ  
հուր և կրակ, դո՛ւ ընդունարան և հա-  
ւաքարան Հայ ցեղի ազնուագոյն զգացում-  
ներուն, պաշտամունք քեզ:

Քո սրբազան կամարներուն տակ Հայ  
սրտերը լուսաւորուեցան Հայոց աշխարհի  
կարմիր Արեւի կենսատու շողերով, քո  
յարկին տակ Հայ սրտերը սորվեցան ու  
գիտցան սիրել կապոյտ Երկինքը և ծովակ-  
ներն ու լեռները Հայաստանի և Նարեչի  
բերքն ու բարիքը Հայոց Մեծաց աշ-  
խարհի:

Քո նուիրական յարկին մէջ կը թեւա-  
ծեն ոգիները Հայ մտքի և գրականութեան  
նոր Լուսաւորչին՝ Լուսանորոգն Մխիթար  
Աբրահօր, պատմագիր Հ. Միքայէլ Չամ-  
չեանի, հայկարան Հ. Գաբրիէլ Աւետիքեա-  
նի, աշխարհագիր Հ. Ղուկաս Ինճիճեանի,  
դիւցազներգու Հ. Արսէն Բագրատունիի,  
թարգմանիչ Հ. Եղուարդ Հիւրմիւզի,  
Հայաստանի ուղեգիր Հ. Ներսէս Սարգի-  
սեանի, Հայոց աշխարհի հայրենախօս  
բանաստեղծ, աշխարհագիր, պատմագիր  
և քան զամէնն սիրելի «Պլպուլն Աւարայ-  
րի» Հ. Ղեւոնդ Ալիշանի, Հայ լեզուի  
պահակ և արթուն դէտ Հ. Արսէն Ղազի-

կեանի և դեռ շատ շատերուն, որոնք իբր  
աշակերտ և դաստիարակ՝ տարիներ շա-  
րունակ իրենց միտքն ու սիրտը նուիրե-  
ցին Հայ մատաղ սերունդը ազգային ոգիով  
դաստիարակելու նուիրական գործին:

Քո կամարներուն տակ ծուարած են հո-  
գիները անոյշ, ցնցուշ բանաստեղծ Մկրտ-  
տիչ Պէշիկթաշլեանի, բազմավաստակ Ար-  
փիար Արփիարեանի և մեծատաղանդ բա-  
նաստեղծ նահատակ Դանիէլ Վարուժանի:

Դո՛ւ Հայ դպրոցի նահապետ և փառա-  
պսակ, դո՛ւ Հայ մտքի, լեզուի և մշակոյ-  
թի բարեբեր այգի, քո դարադարձին ինչ  
տամ նուէր, որ ըլլայ սիրելի, հարազատ  
և յիշատակալից. ահա իմ նուէրները:

Ձերմ ու կարօտագին համրոյր մը՝ Հայոց  
Աշխարհի լեռնապատ Արարատ-Մասիսի  
լանջերէն:

Փունջ մը գոյն գոյն և անուշարոյր ծա-  
ղիկ Արագածի հովիտներէն և պաշտա-  
մունք՝ Օշականի ամենասուրբ գերեզմա-  
նին մէջ անմահօրէն մահացեալ Ս. Մեսրո-  
պի խնկարոյր դամբարանէն:

Ափ մը թաց աւազ Մայր Արագսի ա-  
փերէն:

Քանդակազարդ խաչարձան մը Հին  
Չուղայի աւերակներէն:

Բուռ մը հող Բագրատունեաց մայրա-  
քաղաք՝ Երեւանի շէն իսկ այժմ աւեր Անիի  
պալատներէն, պարիսպներէն ու տաճար-  
ներէն:

Լուսաւորչի լոյս հաւատքի մշտավառ  
կանթեղէն շող մը՝ Էջմիածնի Մայր տա-  
ճարէն: